

Պաշտոնական ընդդիմախոս, բժշկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Գագիկ Վարդգեսի Հակոբյանի

Գրախոսությունը

ԱՐՏԱԿ ԳԱԳԻԿԻ ՀԵՔՈՑԱՆԻ «ՊԱՐՕԴՈՆՏԻ ՀՅՈՒՄՎԱԾՔՆԵՐԻ ԿԼԻՆԻԿՈ-
ԼԱԲՈՐԱՏՈՐ ՎԻՃԱԿԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՄԵՏԱՂԱԿԱՆ և
ՑԻՐԿՈՆԻՈՒՄԻ ՕՔՍԻԴԻ ՀԵՆՔԵՐՈՎ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ԴԵՊՔՈՒՄ» ԺԴ.00.12 - ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱ

մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ներկայումս օրթոպեդիկ ստոմատոլոգիայում կիրառվող բազմաթիվ կոնստրուկցիաների զինանոցում հատուկ տեղ են գրավում անշարժ պրոթեզավորումը: Մակայն մինչ օրս անշարժ պրոթեզավորումից հետո առաջացող բարդությունների տոկոսը բավականին բարձր է, ինչը թելադրում է բուժման և ախտորոշման նոր մեթոդների ներդրման անհրաժեշտությունը օրթոպեդիկ ստոմատոլոգիայի կլինիկական գործունեությունում: Բուժման որակի բարձրացումը պարօդոնտալ հյուսվածքների պաթոլոգիա ունեցող հիվանդների օրթոպեդիկ բուժման ժամանակ շարունակում են մնալ հրատապ խնդիր: Մինևույն ժամանակ, հատուկ ուշադրություն է դարձվում պրոթեզավորման գեղագիտական կողմերին: Ատամնապրոթեզների համակարգչային նախագծման և ավտոմատացված պատրաստման CAD/CAM տեխնոլոգիան նոր հեռանակարներ է բացում օրթոպեդիկ ստոմատոլոգիայում՝ ավանդական մեթոդների նկատմամբ դրսևորելով մի շարք առավելություններ: Դրանով պայմանավորված վերջին տարիներին CAD/CAM տեխնոլոգիան լայն տարածում է գտնում օրթոպեդիկ ստոմատոլոգիայում: Ներկայումս օրթոպեդիկ ստոմատոլոգիայում կիրառվող կոնստրուկցիաների համար առաջարկվում են մի շարք կերամիկական համակարգեր, որոնց ամրության բնութագրիչները, նրանց կլինիկական կիրառման համեմատական արդյունավետությունը, ինչպես նաև նրանց ազդեցությունը եզրային պարօդոնտի վրա ներկայումս լիարժեք չի ուսումնասիրված: Վերոհիշյալը հիմնավորում է այդ

խնդրի արդիականությունը և հետազոտության իրականացումն անհրաժեշտությունը:

Հետազոտությունում առաջ քաշված խնդիրները նպաստակ են հետապնդում բարձրացնել ժամանակակից տեխնոլոգիաներով պատրաստված անշարժ կոնստրուկցիաներով պրոթեզավորման դեպքում օրթոպեդիկ բուժման արդյունավետությունը:

Հետազոտության գործընթացում օգտագործվել են ինչպես ավանդական, այնպես էլ նոր փորձարկման մեթոդներ, կատարվել է ստացված տվյալների ադեկվատ վիճակագրական մշակում:

Գրախոսվող ատենախոսությունում գիտական դրույթները, եզրակացությունները և առաջարկությունները հիմնավորված են կատարված մեծածավալ աշխատանքների համակարգված վերլուծությամբ: Գրախոսվող ատենախոսությունում գիտական նորույթ է հանդիսանում պարօդոնտի հյուսվածքների համալիրի վրա զանազան անշարժ օրթոպեդիկ կոնստրուկցիաների ազդեցության համեմատական գնահատականը՝ ռենտգենաբանական, լնդահեղուկի քանակության, ջրածնային ցուցանիշի, ցիտոմորֆոմետրիկ և միկրոբիոլոգիական համալիր հետազոտությունների արդյունքների վերլուծության հիման վրա: Հիմնավորվել է, CAD/CAM եղանակով պատրաստված ցիրկոնիումի դիօքսիդի հենքով կոնստրուկցիաների կիրառման արդյունավետությունը հենակետային ատամների պարօդոնտի հյուսվածքների վիճակի բարելավման և արդյունավետ օրթոպեդիկ վերականգնման տեսանկյունից:

Հետազոտության արդյունքների գործնական կիրառությունը կնապաստի բժիշկ-ստոմատոլոգի կողմից անշարժ պրոթեզի կոնստրուկցիայի ճիշտ ընտրությանը: Համալիր կլինիկա-լաբորատոր թեստերի կիրառումը հիմնավորում են պարօդոնտալ հիվանդությունների ժամանակ CAD/CAM տեխնոլոգիայով պատրաստված անշարժ պրոթեզների կիրառման արդյունավետությունը:

Ատենախոսական աշխատանքը շարադրված է 130 համակարգչային էջի վրա: Կազմված է ներածությունից, գրական վերլուծություն գլխից, մեթոդներ և նյութեր գլուխներից, սեփական հետազոտությունների երկու գլուխներից, եզրակացությունից, եզրահանգումներից, գործնական առաջարկներից և գրականության ցանկից:

Ատենախոսության ներածության մեջ հեղինակը հիմնավորում է թեմայի ընտրությունը, ինչպես նաև ձևակերպում է ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները, սահմանում է հետազոտության առարկան: Աշխատանքը պարունակում է 18 նկար, 9 աղյուսակ և 4 գծապատկեր: Գրականության ցանկը կազմված է 142 աղբյուրներից:

Կատարված ուսումնասիրությունների ծավալը (հետազոտվել է պրոթեզավորման կարիք ունեցող 105 հիվանդ) բավար է հավաստ արդյունքների ստացման համար: Ուսումնասիրվող աշխատանքի դիզայնը հստակ պլանավորված է հեղինակի կողմից, ձեռք բերված արդյունքների հուսալիությունը՝ հիմնված է ապացուցողական բժշկության սկզբունքների վրա: Գործնական առաջարկությունները հիմնված են հետազոտության արդյունքների վերլուծությամբ ստավցած տվյալների վրա և լիովին իրագործելի են առաջատար բժիշկների գործունեության իրականացման համար՝ դրանով իսկ նպաստելով մատուցվող բժշկական օգնության որակի բարելավմանը: Ատենախոսության սեղմագիրը լիովին արտացոլում է կատարված աշխատանքի հիմնական դրույթերը:

Պաշտոնական ընդդիմախոսը չի վիճարկում ատենախոսության արդիականությունը, պաշտպանության ներկայացվող գիտական դրույթների և եզրակացությունների համապատասխանությունը ներկայացվող պահանջներին:


Ատենախոսության ընտրված թեման, աշխատանքի գիտական դրույթները ողջամիտ են, առաջարկություններն ու եզրակացությունները հիմնավոր են և ներկայացնում են գիտական նորույթ:

Այնուամենայնիվ աշխատանքի ուսումնասիրության ընթացքում առաջացան հարցեր, որոնք ատենախոսի կողմից լուսաբանման կարք ունեն, իհարկե նշված հարցերը չեն նվազեցնում կատարված աշխատանքի որակը: Արդյոք նպատակահարմար չէք համարում հետազոտվող հիվանդների խմբերում ներառել նաև CAD/CAM եղանակով պատրաստված ցիրկոնիումի դիօքսիդի հենքով միաձույլ կոնստրուկցիաների կիրառման համեմատական արդյունավետությունը հետազոտվող հիվանդների խմբերի մեջ:

Եզրակացություն


Հիմնվելով վերը շարադրվածի վրա գտնում եմ, որ ԱՐՏԱԿ ԳԱԳԻԿԻ ՀԵԲՈՅԱՆԻ «ՊԱՐՕԴՈՆՏԻ ՀՅՈՒՄՎԱԾՔՆԵՐԻ ԿԼԻՆԻԿՈ-ԼԱԲՈՐԱՏՈՐ ԿԻՃԱԿԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՄԵՏԱՂԱԿԱՆ և ՑԻՐԿՈՆԻՈՒՄԻ ՕՔՍԻԴԻ ՀԵՆՔԵՐՈՎ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ» ԺԴ.00.12-ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱ մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսական աշխատանքն իրականացվել է բարձր գիտական մակարդակով, ժամանակակից ախտորոշիչ մեթոդների կիրառմամբ, ստացված արդյունքների վիճակագրական մշակմամբ: Ատենախոսության բովանդակությունը, արդիականությունը, գիտական նորույթը և գործնական արժեքը, եզրակացությունները և առաջարկությունները, թեմայի վերաբերյալ հրապարակումները լիովին համապատասխանում են բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման ՀՀ կրթության բարձրագույն որակավորման կոմիտեի ընթացակարգի կանոնակարգին: Հայցորդ ԱՐՏԱԿ ԳԱԳԻԿԻ ՀԵԲՈՅԱՆԸ արժանի է ԺԴ.00.12-ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱ մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս,

բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  Գագիկ Վարդգեսի Հակոբյան

Պրոֆեսոր Գ. Վ. Հակոբյանի ստորագրությունը վավեր է

ԵՊԲՀ գիտական խորհրդի քարտուղար,

բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր 

Տ. Գ. Ավագյան

19 օգոստոսի 2021թ.

